Տնօրեն՝ __/Ս.Ենգիբարյան/________

«05» ---------09-----------------------2022 թ.

# ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Արմավիր մարզի Վաղարշապատի <<Ներսիսյան>> թիվ 6 հիմն.դպրոց 7բ դասարան

ուսումնական հաստատության անվանումը , դասարան

Մելքոնյան Արուսյակ

դասղեկի ազգանունը, անունը

«2022-2023» ուստարի

## Կրթական դաստիարակչական աշխատանքների հիմնական ուղղությունները

1. Ներածություն (դասարանի ընդհանուր բնութագիրը)

VIIբ դասարանում սովորում են 32 աշակերտ: Նրանցից 15-ը աղջիկ են, իսկ 17-ը տղա: Դասարանում սովորող աշակերտները ցուցաբերում են ինչպես միջին, այնպես էլ բարձր առաջադիմություն: Աշակերտներն ընկերասեր են, միաժամանակ, միշտ հանդես են գալիս միմյանց օգնելու և օժանդակելու պատրաստակամությամբ, շփվող են, ունեն մեկը մյուսից լավ հատկանիշներն ընդօրինակելու մեծ ցանկություն: Դասարանին վերաբերող հարցերի քննարկման ժամանակ աշակերտները հանդես են գալիս նոր և հետաքրքիր նախաձեռնություններով:

2. Ուսումնական տարվա ընթացքում նախատեսվող ուսումնադաստիարակչական աշխատանքները

Դաստիարակությունը դպրոցական կրթության կարևոր բաղադրիչն է, որի հիմնական խնդիրներն են սովորողների մեջ քաղաքացիական պատասխանատվության գիտակցության ձևավորումը, հոգևոր դաստիարակությունը, նախաձեռնության, ինքնուրույնության, հանդուրժողականության խթանումը, ինչպես նաև հասարակության մեջ ինտեգրվելու կարողության ձևավորումն ու զարգացումը:

3. Հայեցի դաստիարակություն

3.1 - Հոգևոր դաստիարակություն

Հոգևոր դաստիարակությունը մի բարդ գործընթաց է, որը բազմաթիվ թելերով սերտորեն կապված է ինչպես երեխային շրջապատող սոցիալական միջավայրի, այնպես էլ դաստիարակության տարբեր ձևերի հետ: Այն նպատակ ունի դաստիարակել Աստծո

պատվիրաններով մեծացող աշակերտներ, ովքեր կդրսևորեն քրիստոնյա հային վայել վարք: Հոգևոր դաստիարակության խնդիրն է աշակերտների մոտ սերմանել սեր և հարգանք քրիստոնեության նկատմամբ: Նույն նպատակով կատարել պատմական ակնարկ, որը կնպաստի հոգևոր դաստիարակության ձևավորմանը:

### 3.2 - Գեղագիտական դաստիարակություն

Գեղագիտական դաստիարակությունը հատուկ կազմակերպված մանկավարժական գործընթաց է՝ ուղղված երեխայի գեղագիտական զգացումների, կյանքում և արվեստում գեղեցիկի վերաբերյալ պատկերացումների ձևավորմանը: Ամենօրյա շփումը գեղեցիկի հետ նպաստում է աշակերտի կողմից գեղեցիկի ընկալմանն ու բացահայտմանը: Գեղագիտական դաստիարակության խնդիրը իր երկրի մշակույթը կրող, ստեղծագործական ակտիվություն ունեցող անձի ձևավորումն է:

### 3.3 - Ռազմահայրենասիրական դաստիարակություն

Ռազմահայրենասիրական դաստիարակությունը բազմաշերտ, նպատակաուղղված և անընդմեջ համակարգվող գործընթաց է: Այն ուղղված է մատաղ սերնդի հայրենասիրական, քաղաքացիական պարտքի, հայրենիքին նվիրվածության և հավատարմության դաստիարակմանը: Նպատակն է սովորեցնել լինել ազգի համար պիտանի և արժանի զավակ: Ռազմահայրենասիրական դաստիարակության խնդիրն է աշակերտների մոտ սերմանել սեր և հարգանք հայրենիքի, ակնածանք՝ ֆիդայինների և հայ ազատամարտիկների նկատմամբ, աշակերտների բնավորության մեջ ձևավորել հայրենասիրություն և ռազմարվեստ:

### 3.4 - Ֆիզիկական դաստիարակություն

Ֆիզիկական դաստիարակությունը նպաստում է առողջության ամրապնդմանը, կենսական կարևոր շարժողական հմտություններին տիրապետմանը և աշխատունակության բարձր մակարդակի հասնելուն: Ֆիզիկական դաստիարակության առանցքում դրված է <Առողջ մարմնում՝ առողջ հոգի> դրույթը, իսկ վերջինիս գրավականն է զբոսանքները, շրջագայությունները և մարզումները: Ֆիզիկական

դաստիարակության խնդիրն է ֆիզիկական զարգացմանն ուղղված պայմանների ստեղծում, վնասակար սովորությունների հանդեպ բացասական վերաբերմունքի ձևավորում:

3.5 - Աշխատանքային դաստիարակություն

Աշխատանքային դաստիարակությունն ուղղված է երեխայի մոտ աշխատանքի նկատմամբ պատասխանատվության ձևավորում, ինչպես նաև աշխատանքային կարողությունների և հմտությունների ձևավորում: Աշխատանքային դաստիարակության խնդիրներն են աշխատանքային հմտությունների և կառուցողական վերաբերմունքի խթանում:

3.6 - Բնապահպանական դաստիարակություն

Բնապահպանական դաստիարակությունը էկոլոգիական կուլտուրայի հիմքն ու անբաժանելի մասն է կազմում: Այն շրջակա միջավայրի նկատմամբ գիտակցական վերաբերմունքի մակարդակի բարձրացմանը նպատակաուղղված գործընթաց է: Այն հնարավորություն է տալիս ձեռք բերել գիտելիքներ և կարողություններ բնության հետ շփման ժամանակ:

3.7 - Դպրոց-ընտանիք կապը

Դպրոց-ընտանիք կապը հնարավորություն է տալիս ձևավորելու բազմակողմանի զարգացած և ներդաշնակ անձնավորություն: Այս կապը պետք է պահպանվի ուսուցման ողջ գործընթացի ընթացքում: Երեխաները պետք է հասկանան, որ ընտանիքը հանդիսանում է պետության հիմքն

ու

կորիզը:

# ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

| Ոււ/շ | Ուս. աշխատանքի բովանդակությունը | Կատարման ժամկետը | Կատարող |
|---|---|---|---|
| I | Անցկացնել դասարանական ժողովներ դասարանում ծագող ուսումնադաստիարակչական խնդիրները լուծելու,ծնողներին տվյալ խնդիրները լուսաբանելու նպատակով: Ծնողների հետ անցկացնել անհատական զրույցներ: Աշակերտներին բաշխել ըստ նստարանների՝ հաշվի առնելով նրանց առողջական և ֆիզիկական տվյալները: | Ամիսը մեկ անգամ | Դասղեկ, ծնողներ |
| II | Հետևել աշակերտների հաճախելիությանը,կարգապահությանը, առաջադիմությանը: | Ուս.տարվա ընթացքում | Դասղեկ |
| III | Անցկացնել դասալսումներ,աշխատել դասավանդող ուսուցիչների հետ աշակերտների առաջադիմության բարձրացման ուղղությամբ: | Շաբաթը մեկ անգամ | Դասղեկ |
| IV | Ուսուցման գործընթացի արդյունավետության բարձրացման համար կազմակերպել ընկերական փոխօգնություն: | Ուս.տարվա ընթացքում | Դասղեկ,աշակերտներ |
| V | Անցկացնել դասղեկի ժամեր: | Շաբաթը մեկ անգամ | Դասղեկ |
| VI | Նախապատրաստել և կազմակերպել դասարանի կոլեկտիվի մասնակցությունը դպրոցական գործընթացներին, վերահսկել դասարանի աշակերտների մասնակցությունըն խմբակներին: | Ամիսը մեկ անգամ | Դասղեկ |
| VII | Աշակերտների հետ արտադասարանական դաստիարակչական աշխատանքի կազմակերպում՝կոլեկտիվ ստեղծագործական աշխատանքներ,այցելություններ թատրոն,համերգասրահ,թանգարաններ, ցուցահանդեսներ: | Կիսամյակում երկու անգամ | Դասղեկ, ծնողկոմիտե |
| VIII | Կատարել դաստիարակչական աշխատանք դասարանի սովորողների շրջանում՝սերտորեն համագործակցելով մյուս մանկավարժական աշխատողների հետ: | Ուս.տարվա ընթացքում | Դասղեկ |
| IX | Նպաստել դպրոց- ընտանիք կապի ստեղծմանն ու ամրապնդմանը | Ուս.տարվա ընթացքում | Դասղեկ |
| X | Անհրաժեշտության դեպքում սովորողների համար կազմակերպել ուսումնական օգնություն: | Ուս.տարվա ընթացքում | Դասղեկ |
| XI | Ծանոթանալ սովորողների սոցիալական պայմաններին,ընտանեկան կազմին,բնակարանային և կենցաղային պայմաններին: | Ուս.տարվա սկզբին | Դասղեկ |
| XII | Անցկացնել բաց դասեր: | Կիսամյակում երկու անգամ | Դասղեկ |
| XIII | Կազմակերպել աշակերտների առողջության պահպանման հետ կապված բժշկական հետազոտության կատարումը: | Ուս.տարվա ընթացքում | Դասղեկ, բուժքույր |

| | | | |
|---|---|---|---|
| XIV | Հետևել աշակերտների կողմից դասագրքերի պահպանմանը: | Ուս.տարվա ընթացքում | Դասղեկ |
| XV | Կազմակերպել դասարանի արձակուրդային միջոցառումները հասարակական միությունների,աշակերտական ակտիվի,ծնողների հետ համատեղ: | Աշուն,գարուն | Դասղեկ, ծնողկոմիտե |
| XVI | Անցկացնել <<Ազգ և պետություն>> թեմայով բաց քննարկումներ և վերլուծություններ: | Ուս.տարվա ընթացքում | Դասղեկ,Հայրենագիտության ուսուցիչ |
| XVII | Անցկացնել անհատական զրույցներ հետ մնացող աշակերտների հետ ուսումնական գործընթացում ի հայտ եկող թերությունները վերացնելու և շտկելու նպատակով: | Ուս.տարվա ընթացքում | Դասղեկ |
| XVIII | Իրականացնել դասարանի համար սահմանված գործավարությունը,հանրակրթական դպրոցի տնօրինությանը ներկայացնել սովորողների առաջադիմության, հաճախումների և վարքի մասին տեղեկատվություն: | Ուս.տարվա ընթացքում | Դասղեկ |
| XIX | Մանկավարժական խորհրդի քննարկումների ժամանակ ներկայացնել դասարանի առաջադիմության, հաճախումների և վարքի մասին տեղեկատվություն: | Մանկավարժական խորհրդի նիստերի ընթացքում | Դասղեկ |
| XX | Արգելել սովորողների, ուսուցիչների և ծնողների այն նախաձեռնությունները, որոնք կարող են սովորողի առողջության, կյանքի համար վտանգ պարունակել, ինչպես նաև խաթարել ուսումնադաստիարակչական աշխատանքների իրականացումը: | Ուս.տարվա ընթացքում | Դասղեկ |
| XXI | Հավաքել սպառիչ տեղեկություններ՝ լրացուցիչ կրթական հաստատություններում, դասարանի աշակերտների մասնակցության մասին | Հոկտեմբեր | Դասղեկ |
| XXII | Կազմակերպել ուսումնական քառորդում դասարանի կրթադաստիարակչական կենսագործունեության արդյունքների ամփոփումը: | Կիսամյակի ավարտին | Դասղեկ |
| XXIII | Կատարել աշակերտների մանկավարժահոգեբանական հետազոտություն: | Ուս.տարվա ընթացքում | Դասղեկ |
| XXIV | Ուսումնասիրել աշակերտների ընտանեկան դաստիարակության պայմանները: | Առաջին կիսամյակում | Դասղեկ |
| XXV | Վերստուգել կամ պատրաստել դասարանի սոցիալական անձնագիրը և հանձնել սոցիալական մանկավարժին : | Առաջին քառորդ | Դասղեկ, սոցմանկավարժ |
| XXVI | Օգնել դասարանական խորհրդին կազմակերպել դասարանի կենսագործունեությունը (ընթացիկ պլանավորում, աշխատանքների կազմակերպում, քննարկում): | Յուրաքանչյուր կիսամյակ | Դասղեկ,աշակերտ |
| XXVII | Կազմակերպել ծնողական խորհրդի աշխատանքները, համաձայն վերջինիս պլանի: | Յուրաքանչյուր կիսամյակ | Դասղեկ,ծնողկոմիտե |

| | | | |
|---|---|---|---|
| XXVIII | Անցկացնել էքսկուրսիա՝ համախելով Ամանորին նվիրված որևէ ներկայացման: | Դեկտեմբեր | Դասղեկ,ծնողկոմիտե |
| XXIX | Կազմակերպել միջոցառում գարնանային տոներին նվիրված: | Մարտ, ապրիլ | Դասղեկ |
| XXX | Անցկացնել զրույցներ <<Մեծ Եղեռն>> թեմայով | Ապրիլ | Դասղեկ |
| XXXI | Ակտիվացնել աշակերտական խորհրդի գործունեությունը, նրանց մասնակից դարձնել հերթապահությանը, շենքի, շրջապատի, գույքի պահպանման և վերանորոգման աշխատանքներին: | Ուս.տարվա ընթացքում | Դասղեկ,աշակերտ |
| XXXII | Ակտիվացնել ռազմահայրենասիրական դաստիարակության ուղղությամբ տարվող աշխատանքները: | Ուս.տարվա ընթացքում | Դասղեկ,աշակերտ |
| XXXIII | Ծնողների,կազմակերպչի և աշակերտների հետ համատեղ կազմակերպել տարեվերջյան միջոցառումների նախապատրաստական աշխատանքները: | Մայիս | Դասղեկ, կազմակերպիչ,աշակերտ |
| XXXIV | Կազմակերպել դասագրքերի հանձնումը գրադարան: | Մայիս | Դասղեկ,գրադարանավար |

## ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱՍԻՐԱԿԱՆ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԽՄԲԱԿՆԵՐԻ

| N | Նախասիրական-առարկայական խմբակ | Գեղարվեստական երաժշտական խմբակներ | Մարզական խմբակներ | Այլ խմբակներ |
|---|---|---|---|---|
| 1. | | | | |
| 2. | | | | |
| 3. | | | | |
| 4. | | Երաժշտական դպրոց | | |
| 5. | | | | |
| 6. | | Ֆուտբոլ | | |
| 7. | | | Մարմնամարզություն | |
| 8. | | | Պար | |
| 9. | Անգլերեն | | | |
| 10. | | | Ֆուտբոլ | |
| 11. | Շախմատ | | | |
| 12. | | | Պար | |
| 13. | | | | |
| 14. | Անգլերեն,ռուսերեն | Երաժշտական դպրոց.Դհոլ | Պար | |
| 15. | | Երաժշտական դպրոց. Դհոլ | | |
| 16. | | | | |
| 17. | | | | |
| 18. | | | | |
| 19. | | | | |
| 20. | | | | |
| 21. | | | Ձյուդո | |
| 22. | Անգլերեն | | | |
| 23. | | | Ֆուտբոլ | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 24. | | Մակար Եկմալյանի անվ. Թիվ 1 երաժշտական դպրոց | | |
| 25. | | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 26. | | | Պար | |
| 27. | | | | |
| 28. | | | | |
| 29. | | | Պար | |
| 30. | Անգլերեն | | Ֆուտբոլ | |
| 31. | Ռուսաց լեզու | | | |
| 32. | | | | |

## ԴԱՍԱՐԱՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԹԵՄԱՏԻԿԱՆ

| Անցկացման շաբաթները | Անցկացվող միջոցառման (*դասախոսություն,զրույցներ, դիտողական արշավներ,էքսկուրսիաներ և այլն*) բովանդակությունը | Ծանոթություն |
|---|---|---|
| I | Պատմական ակնարկ Հայաստանի մասին | |
| II | Հայկական ավանդույթները,որոնցով հպարտանում ենք | Դասղեկ,աշակերտ |
| III | Ընտանիք և պարտականություին | Դասղեկ,աշակերտ |
| IV | Բարոյականություն և իրավունք | Դասղեկ,աշակերտ |
| V | Արցախյան պատերազմի հետևանքները | Դասղեկ,աշակերտ |
| VI | Իմ լավագույն ընկերը | Դասղեկ,աշակերտ |
| VII | Իմ իրավունքները | Դասղեկ,աշակերտ |
| VIII | Իմ պարտականությունները | Դասղեկ,աշակերտ |
| IX | Ով է պատասխանատու իմ իրավունքների համար | Դասղեկ,աշակերտ |
| X | Ուզում եմ ունենալ պետություն,որտեղ . . . | Դասղեկ,աշակերտ |
| XI | Ում եմ ես վստահում | Դասղեկ,աշակերտ |
| XII | Պատերազմ տեսած մանուկները | Դասղեկ,աշակերտ |
| XIII | Արդար, ազնիվ և օրինապահ | Դասղեկ,աշակերտ |
| XIV | Երբ աշխատանքը միայն ուրախություն է | Դասղեկ,աշակերտ |
| XV | Ում եմ համարում գեղեցիկ մարդ | Դասղեկ,աշակերտ |
| XVI | Հայտնի հայ մարզիկները | Դասղեկ,աշակերտ |
| XVII | Ուժեղ լինել նշանակում է | Դասղեկ,աշակերտ |
| XVIII | Ում կուզեի նմանվել | Դասղեկ,աշակերտ |
| XIX | Ինչպես հասկանալ մարդկանց | Դասղեկ,աշակերտ |
| XX | Ինչպես պահպանել երկիր մոլորակը | Դասղեկ,աշակերտ |
| XXI | Իմ վարքը տանը և շրջապատում | Դասղեկ,աշակերտ |
| XXII | Գիրքը իմ կյանքում | Դասղեկ,աշակերտ |
| XXIII | Երաժշտությունը իմ կյանքում | Դասղեկ,աշակերտ |
| | | Դասղեկ,աշակերտ |

| | | |
|---|---|---|
| XXIV | Ընկերություն և համերաշխություն | Դասղեկ,աշակերտ |
| XXV | Մարդիկ,որոնց հանդիպում եմ ամեն օր | Դասղեկ,աշակերտ |
| XXVI | Իմ հայրենիքի պատմության հայտնի էջերը | Դասղեկ,աշակերտ |
| XXVII | Արցախյան հերոսամարտը | Դասղեկ,աշակերտ |
| XXVIII | Ազատամարտի հերոսները | Դասղեկ,աշակերտ |
| XXIX | Շփման ձևեր և միջոցներ | Դասղեկ,աշակերտ |
| XXX | Վատ սովորույթներ . Ինչպես պայքարել դրանց դեմ | Դասղեկ,աշակերտ |
| XXXI | Իմ երազանքների մասնագիտությունը | Դասղեկ,աշակերտ |
| XXXII | Ազգային ծեսեր և տոնակատարություններ | Դասղեկ,աշակերտ |
| XXXIII | Դպրոցական զանգ.ի՞նչ խորհուրդ ունի այն | Դասղեկ,աշակերտ |
| XXXIV | Ի՞նչ տվեց ինձ այս ուսումնական տարին: | Դասղեկ,աշակերտ |

# ԱՇԽԱՏԱՆՔ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ

## ԾՆՈՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ

| Անցկացման օրը | Քննարկվող հարցերը | Համառոտ բովանդակությունը | ծանոթություն |
|---|---|---|---|
| 10.09.2020 | Կազմակերպչական հարցեր | Ծնողկոմիտեի ընտրություն.<br>Ծանոթություն նոր ծնողների հետ | |
| | | | |
| | | | |
| | | | |
| | | | |
| | | | |

## ԾՆՈՂԿՈՄԻՏԵԻ ԿԱԶՄԸ

| | Անուն, ազգանուն | | |
|---|---|---|---|
| Նախագահ | Անի Խաչատրյան | | |
| Անդամներ | 1. Թամազյան Սոնա<br>2. Աղայան Լիլիթ | | |
| | | | |

# ԴԱՍԱՐԱՆԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՆՁՆԱԳԻՐԸ

| հ/հ | Խնդիրը | Տեղեկություններ | |
|---|---|---|---|
| | | Թիվ | Անուն, ազգանուն |
| 1. | Երկկողմանի ծնողազուրկ երեխաներ | 0 | |
| 2. | Միակողմանի ծնողազուրկ երեխաներ/հայր/ | 0 | |
| 3. | Միակողմանի ծնողազուրկ երեխաներ/մայր/ | 0 | |
| 4. | <<Ռիսկային խմբի>> երեխաներ | 2 | Մեսրոպյան Մոնիկա, Գասպարյան Քնարիկ |
| 5. | Ֆիզիկական խնդիրներ ունեցող երեխաներ | 1 | Ղազարյան Ռոզա |
| 6. | Հաշմանդամ ծնողներ ունեցող երեխաներ | 0 | |
| 7. | Անբարենպաստ ընտանիքներ | | |
| | Ծնողները հարկ եղած ուշադրությունը չեն դարձնում երեխային | 0 | |
| | Ծնողները չեն կարողանում դաստիարակել երեխային | 0 | |
| | Ծնողները հաշվառված են ոստիկանությունում | 0 | |
| 8. | Սոցիալապես անապահով ընտանիքներ | 4 | Զաքարյան Սերգեյ, Բոբոխյան Նարեկ,Գասպարյան Քնարիկ, Ղազարյան Ռոզա |
| 9. | Բազմազավակ ընտանիքիներ | 3 | Թամազյան Ժանետա, Խրոյան Անի, Եսայան Դավիթ |